ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ Հեռ. 091407836
Էլ. հասցե. sh.doydoyan@icloud.com
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.09.2020
346-23

Ճամբարակի համայնքապետ
Վազգեն Ադամյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Ադամյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2020թ. սեպտեմբերի 3-ի հարցմանն ի պատասխան՝ սեպտեմբերի 11-ին Ճամբարակի համայնքապետարանը տրամադրել է պատասխան գրություն (կցվում է), որով սակայն չեն տրամադրվել հարցմամբ պահանջվող տեղեկությունները՝ խախտելով ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու իրավունքը:

Ուստի, եւս մեկ անգամ դիմում ենք ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի.

Ճամբարակ քաղաքի բազմաբնակարան շենքերի բակում՝ ֆուտբոլի դաշտի և Սուրբ Խաչ եկեղեցու հարևանությամբ գտնվող մանկական խաղահրապարակին առնչվող՝ Ճամբարակի համայնքապետարանում առկա **բոլոր փաստաթղթերի պատճենները**, այդ թվում նաև՝ խաղահրապարակի նկատմամբ Ճամբարակի համայնքապետարանի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը, ավագանու որոշումը, որով այդ գույքը տեղափոխվել է համայնքի հաշվեկշիռ, գույքի արժեքը հավաստող փաստաթղթերը և այլն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան